Երկու կանայք

	Իսրայել, գլուխ 12	Գազանի վրա նստած (գլ. 17)
Որտեղ	Երկնքում, շատ ջրերի վրա	Գազանի վրա նստած (գլ. 17)
Մայրը՝	Արու զավակի	Պոռնիկների
Հագած	Արեւի հետ	Մանուշակագույն, Կարմիր, Ոսկի
Ինքնությունը՝	Արև, լուսին, աստղեր	Թագավորում է երկրի թագավորների վրա
Թշնամին՝	Վիշապը	10 թագավորները
Կապը՝	Աշխարհից ատված	աշխարհից սիրված
Օժանդակված՝	Երկնքից տրված թևերով	Վիշապից
Խորհուրդը՝	12 աստղերով թագ	Մեծ Բաբելոն
Այրիացած	Ամուսնալուծված կարգավիճակը	«ես որբևայրի չեմ…»
Վերջնական վայրը՝	Նոր Երուսաղեմ	Դևերի բնակարան

Մեծ Բաբելոն (քաղաք), գլ. 18
- թագավորներ
- առևտրականներ
- ծովով առևտուր անողները

Կան մարդիկ, ովքեր հավատում են, որ Եկեղեցին անցնելու է Նեղություններով: Ինչ որ իմաստով, նրանք ճիշտ են: Կա մի եկեղեցի, որ անցնելու է. Թիվատիրին խոստում կա Հայտ. 2:22-ում: Այս կինն ավելի շատ ուշադրության է արժանանում, քան այս գրքի որևէ այլ խորհրդապատկեր: Նա նույնականացման ավելի շատ նշաններով է շրջապատված, քան այս գրքի որևէ այլ խորհրդապատկեր:

Բաբելոնը Սուրբ Գրքում հիշատակվում է ավելի քան 300 անգամ և նույնսիկ երեք անգամ նշվում է Քրիստոսի սերդնաբանության մեջ: Այն հանդիսանում էր համաշխարհային առաջին բռնակալի մայրաքաղաքը և նաև կլինի համաշխարհային վերջին բռնակալի մայրաքաղաքը: Բաբելոնը միանշանակ հաստատում է Աստվածաշնչի տեսակետի բառացիությունը...

Բաբելոնը հիշատակվում է վեց անգամ հայտնության գրքի մեջ:

1. Հայտնություն 14:8-ում այն կոչվում է այդ «այն մեծ **քաղաքը**»:
2. Հայտնություն 16:19-ում այն կոչվում է այդ «մեծ Բաբելոնը»:
3. Հայտնություն 18:2-ում այն կոչվում է այդ «մեծ **քաղաք** Բաբելոնը»:
4. Հայտնություն 18:10-ում այն կոչվում է այդ «զորավոր **քաղաքը**»:
5. Հայտնություն 18:10-ում այն կոչվում է այդ «Բաբելոն մեծ **քաղաքը**»:

6. Միայն Հայտնություն 17:5-ում նա կանչում է « «Խորհուրդ, մեծ Բաբելոն՝ պոռնիկների ու երկրի պղծությունների մայրը»:

Մեծ պոռնիկը. Հայտնություն 17

- Յոթ հրեշտակները խոսում են Հովհաննեսի հետ, vv. 1-2
- Հովհաննեսը անցնում է եւ տեսնում է մի կնոջ, 3-6
- գազանի վրա նստած, 7 գլուխ և 10 եղջյուր, 7-18

1) Եվ յոթ թասեր ունեցող յոթ հրեշտակներից մեկը եկավ ու ինձ հետ խոսեց՝ ինձ ասելով. «Արի՛, որ քեզ ցույց տամ այն մեծ **պոռնիկի** դատաստանը, նստում է շատ ջրերի վրա: 2) Որի հետ պոռնկացան երկրի թագավորները ու երկրի բնակիչները նրա պոռնկության գինիով արբեցին»:

Եր. 51:7 - 7 Ոսկի բաժակ էր Բաբիլոնը Տիրոջ ձեռքին, որ արբեցնում էր բոլոր երկիրը: Նորա գինուց խմեցին ազգերը, սորա համար հիմարացան ազգերը:

Համաշխարհային համակարգ (World System). Քրիստոսը չի աղոթում աշխարհի համար (Հովհ. 17:9, 15:18,19):

Պոռնկություն = սխալ պաշտամունք, շողոքորթություն (Եր. 3:6,8,9, Եզեկ. 16:32, Օվս. 1:2, Հայտ. 2:22), ձևական սեր, արհեստական սիրահարվածություն, մտերմություն շահի համար: (Այս գլխում չորս անգամ անվանվում է «պոռնիկ»: Ութ անգամ անվանվում է «քաղաք»): Նաև, Երուսաղեմս է կոչվում պոռնիկ (Ես. 1:21), Տյուրոսն էր պոռնիկ (Ես. 23:1617), Նաև Նինվեն (Նավում. 3:4):

«Ջրեր». նայիր h. 15-ը:

Լենինը ճիշտ էր՝ կրոնը մարդկանց օփիումն է. «գինով հարբած»:
Պետության կառավարումը «կրոնի» կողմից ամենավտանգավոր բաներից մեկն է:

Հուշումներ

- Պոռնիկ: Ծայրահեղ փոփոխական ու անհավատարիմ բնավորություն. ցույց է տալիս անհավատարմություն Աստծո հանդեպ մեկի տեսակետից, ով ասում է, որ պատվում է Աստծուն:
- Համաշխարհային ազդեցություն ունի. ողջ աշխարհի վրա
- Նա նստած է (իշխում է, տիրում է) գազանի վրա

3) Եվ ինձ հոգիով անապատը տարավ. Ու տեսա մի կնոջ՝ կարմիր գազանի վրա նստած, և գազանը լեցուն էր հայհոյական անուններով. Ուներ յոթ գլուխ և տասը եղջուր:
4) Եվ կինը ծիրանի ու կարմիր էր հագած, զարդարված էր ոսկով, պատվական քարերով ու մարգարիտներով և իր ձեռքին մի ոսկե գավաթ ուներ՝ լեցուն իր պոռնկության

պղծություններով ու անմաքրությամբ: 5) Եվ նրա ճակատին մի անուն էր գրված. «Խորհուրդ, մեծ Բաբելոն՝ պոռնիկների ու երկրի պղծությունների մայրը»:

Ծիրանին Հռոմեական կայսրության իշխող գույնն էր. բոլոր սենատորներն ու կոնսուլներ իրենց կրծքին ծիրանի գոտի էին կրում, որպես իրենց պաշտոնի նշան. Կայսրի հագուստները ծիրանի կտորի էին: Կարմիր գույնն ընդունվեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու կողմից:

«**Ոսկե բաժակ**» (Եր. 51:7): «Պղծություններ», բարձր տեղեր (Դ Թագ. 23:13): Եկեղեցին չի կարող իշխել, քանի դեռ Նրա մերժված Տերը չի վերադարձել զորությամբ:

> 4 Թագ. 23:13 - 13 Եւ այն բարձրաւանդակները, որ Երուսաղէմի դիմացը Ապականութեան սարի աջ կողմին էին, որ շինեց Իսրայէլի թագաւոր Սողոմոնը Սիդոնացիների գարշելի Աստարովթին և Մովաբացիների գարշելի Քամովսին և Ամմոնի որդկանց պիղծ Մեղքոմին, թագաւորը պղծեց:

- Աստվածհայհոյություն է ցանկացած վարդապետություն, որ փորձում է ինչ որ բան ավելացնել Աստծո ավարտած գործին. գործերով փրկությունը հերքում է Աստծո փառքը = հայհոյություն):

musterion = գաղտնիքը բացահայտված*:* Բաբելոնի խորհուրդը հմմտ. *«*Ճշմարիտ Եկեղեցու» խորհրդի *(*Եփ. *3:1-9):* Պոռնիկների մայրը *(*հոգնակի. անառականոց*): (*կրոնավորությունը*)* տանում է կռապաշտության *(*Հայտ. *18:7): «*Ես որբևայրի չեմ*»:*

Հուշումներ

- Ոսկե գավաթ. թանկարժեք, փայլուն, նայելուն հաճելի. արտաքինից՝ Աստծո ծառայության մի անոթ, սակայն իրականում կեղծ, լցված պղծություններով
- Խորհուրդ, Մեծ Բաբելոն: Խորհուրդ, որ կապված է Նեբրովթի Բաբելոնի հետ: Հայտ. 11:8, որպես իդիոմ
- Պոռնիկների մայր. նրա հոգևոր սերունդը: Միայնակ չէ

6) Եվ տեսա այն կնոջը, որ սրբերի արյամբ ու Հիսուսի վկաների արյունով էր հարբած, ու երբ նրան տեսա, սաստիկ զարմացա: 7) Եվ հրեշտակն ինձ ասաց. «Ինչո՞ւ զարմացար, ես քեզ կասեմ այդ կնոջ խորհուրդը ու այն գազանի, որ նրան իր վրա է կրում, որ յոթ գլուխ ու տասը եղջուր ունի:

Սուրբերի արյունով հարբած: (Ինչու՞ Հովհաննեսը «զարմացավ»: Պետք է որ զարմանալի բան չլիներ այն, որ հեթանոսական Հռոմը հալածելու էր հավատացյալներին: Պոռնիկի սերը կեղծ սեր է, իսկ սիրահարվածությունն արհեստական է՝ շահի համար):

8) Այն գազանը, որ տեսար, կար ու չկա, և անհուն վիհից պիտի ելնի ու դեպի կորուստ գնա: Ու երկրի վրա բնակվողները, որոնց անունները աշխարհի հիմնավորումից Կենաց գրքում գրված չեն, պիտի զարմանան, երբ տեսնեն, որ գազանը կար ու չկա, թեև կա:

Հուշումներ

- Քրիստոնյաների հալածիչ (ճշմարիտ հավատացյալների): Փաստորեն, նա քեֆ է անում սրբերի արյունով: (Dave Hunt):

Անտեղյակ մի (զարմացեք) եղեկ սատանայի հնարքներին (Բ Կորն. 2:11): Օձի սերունդը (Ծնն. 3:15), օձ = սատանա (Հայտ. 12:9),«Իժերի ծնունդներ» (Մաթ. 12:34): Բարկության, անհնազանդության որդիներ (Եփ. 2:2,3), սատանայի որդիներ (Հովհ. 8:44, Ա Հովհ. 4:1-3):

9) Ահա այստեղ իմաստություն ունեցող մի միտք է պետք. Այն յոթ գլուխները լեռներ են, որոնց վրա նստում է կինը: 10) Եվ յոթ թագավորներ կան, հինգը ընկած են, մեկն ապրում է, իսկ մյուսը դեռ չի եկել, ու երբ գա, կարճ ժամանակ պիտի մնա: 11) Եվ այն գազանը, որ կար ու չկա, նա ութերորդն է և յոթից է ու գնում է դեպի կորուստ:

«...յոթ սարեր...». սարեր = կառավարություններ (մարգարեությունների մեջ) (Դան. 2:25,44 և այլն): Հորացիոսը (Horace) գրում է. «Աստվածները, որ բարեհաճությամբ են նայում յոթ սարերին...»: Օվիդիուս. «Իսկ Հռոմն ամբողջ աշխարհին նայում է իր յոթ սարերի վրայից՝ կայսրության աթոռանիստն ու աստվածների բնակատեղին»: Ավգուստինը գրում է. «Բաբելոնը նախկին Հռոմն է, իսկ Հռոմը՝ հետագա Բաբելոնը»: (Անգամ Պետրոսն է օգտագործում Բաբելոն բառը, որպես Հռոմի «ծածկագիր անուն» (Ա Պետ. 5:13), թեև մենք այն բառացի ենք ընդունում. Բաբելոնը դարձավ քրիստոնեական կենտրոն:

Սատանայի յոթ գեր-պետությունները- յոթ գլուխները, յոթ թագավորներ



Հուշումներ

- Յոթ սարեր: Հռոմը կառուցված է յոթ սարերի վրա. Պալատին, Ավենտին, Կապիտոլիում , Կվիրինալ, Վիմինալ, Էսկվիլին, Ցելիում (Aventine, Caelian, Capitoline, Esquiline, latine, Quirinal, and Viminal.)

10 եղջյուրներ

12) Եվ տասը եղջուրը, որ տեսար, տասը թագավորներ են, որ դեռ թագավորություն չեն ստացել, բայց մեկ ժամով որպես թագավորներ իշխանություն կստանան գազանի հետ: 13) Սրանք մի միտք ունեն ու իրենց զորությունն ու իշխանությունը տալիս են գազանին:

Կարծիքներ հայտնելն անօգուտ է. նրանք դեռ իշխանության չեն եկել (Դան. 7:7):

14) Սրանք Գառնուկի հետ պիտի պատերազմեն, և Գառնուկը նրանց պիտի հաղթի, քանի որ Նա տերերի Տերն է և թագավորների Թագավորը, և Նրա հետ եղողները կանչված են՝ ընտրված ու հավատարիմ »: 15) Ու ասաց ինձ. «Այն ջրերը, որ տեսար, որոնց վրա նստած է պոռնիկը, ժողովուրդներ են, բազմություններ, ազգեր ու լեզուներ: 16) Եվ տասը եղջյուրները, որ տեսար գազանի վրա, ատելու են պոռնիկին ու նրան դարձնելու են ամայի ու մերկ և ուտելու են նրա մարմինն ու կրակով այրելու են նրան:

Այստեղ «ջրեր» բառը մեկնվում է մեզ համար: Ես. 8:7 և այլն:

> Ես. 8:7 - 7 Ուրեմն նորա համար Տէրը նորանց վերայ կհանէ գետի զօրաւոր և առատ ջուրերը, այսինքն Ասորեստանի թագաւորին և նորա բոլոր զօրութիւնը. և նա վեր կբարձրանայ իր բոլոր յատակներիցը, և կանցնէ իր բոլոր եզերքներիցը:

Թագավորները, վերջնական արդյունքում, ոչնչացնում են պոռնիկին: Նկատեք, որ պոռնիկը գազանը չէ, այլ նստած է գազանի վրա: Նա, վերջիվերջո, շահագործում է գազանին, բայց գազանը, վերջում, հոշոտում է նրան (Հայտ. 17:16,17): «Ոսկե գավաթ» հղումը կապում է Երեմիայի հետ, և այլն: Բաբելոնի խորհուրդը որպես կրոնական կեղծ համակարգ մեկացվում է Հռոմի հետ վաղ դարերից սկսած մինչև մեր օրերը: Dave Hunt, The Woman Rides the Beast.

17) Որովհետև Աստված նրանց սրտի մեջ դրեց, որ Իր կամքը կատարեն ու միակամ լինեն և իրենց թագավորությունը տան գազանին՝ մինչև Աստծո խոսքերը կատարվեն: 18) Եվ այս կինը, ում տեսար, մեծ քաղաքն է, որ թագավորում է երկրի թագավորների վրա»:

Մեծ քաղաքը. այն ժամանակ Հռոմը. (7 անգամ = բառացի Բաբելոն):

Մեծ Քաղաքը, որ իշխում է երկրի թագավորների վրա: Հովհաննեսի ժամանակ, դա կարող էր լինել միայն Հռոմը:

Այսօր. առանձին, ինքնավար պետություն Հռոմի մեջ. Վատիկանը: Նա իր սեփական դիպլոմատիկ դեսպանություններն ունի աշխարհի խոշոր մայրաքաղաքներում: Հավատացյալների հանդեպ դրա վայրագությունների պատմությունը հավասարը չունի մարդկության պատմության մեջ: (Դեյվ Հունտ. «Գազանի վրա նստած կինը» ([Dave Hunt, A

Woman Rides the Beast, Harvest House, 1994) կարդալու համար պարտադիր է այս թեման ուսումնասիրող յուրաքանչյուր ուսանողի համար):

Հայտնություն 18. Մեծ Բաբելոնը (Քաղաքը)

Ծովափնյա քաղաք, որին կործանեց Աստված (Հայտ. 18:8-10,19,21) հմմտ. Յոթ բլուրների վրա կառուցված քաղաքը, որին կործանեց քաղաքական գազանը (Հայտ. 17:16):

Նշում. Ալեքսանդր Մեծը ծրագրում էր նավահանգիստ կառուցել 1000 նավի համար...

17-րդ գլխի Բաբելոնը = 18-րդ գլխի Բաբելոնին. «Բաբելոն» բառը ոչ մի անգամ չի օգտագործվում գազանի կամ դրա գլուխների համար (17:5,18): Համեմատեք Հայտնություն 18-րդ գլխից առաջ ու հետո եկող համատեքստերը (16:19, 17:1, 18; 18:2-3; 19:2), ինչպես նաև Հայտնություն 18:3,24-ը 6:9-11-ի հետ:

1) Եվ **սրանից հետո** մի ուրիշ հրեշտակ տեսա, որ իջնում էր երկնքից ու մեծ իշխանություն ուներ, և երկիրը լուսավորվեց նրա փառքից: 2) Եվ ուժգին ձայնով հզոր աղաղակեց, ասելով. «Ընկա՛վ, ընկա՛վ մեծ Բաբելոնը և դարձավ **դևերի կացարան** ու բոլոր պիղծ ոգիների արգելանոց և վանդակ՝ բոլոր պիղծ և ատելի թռչունների համար»:

Meta tauta. սրանից (ինչի՞ց) հետո: Կրոնի փլուզումից հետո:

«...ընկա՛վ, ընկա՛վ մեծ Բաբելոնը». Ես. 21:9, Հայտ. 14:8: Յոնթապատիկ կոչ. Ես. 48:20, 52:11, Եր. 50:8,9, 51:6,8, Զաք. 2:6,7, Բ Կորն. 6:17,18, Հայտ. 18:4:

Դևերի ու պիղծ թռչունների կացարա՞ն: Թռչունները նույնականացվում են սատանայի հետ Մաթ. 12:31-32-ում: (Հազարամյակի մեջ մուսացվելու՞ է) Օտար ենթադրություններ. Ես. 13:19-22, Եր. 50:38-40:

> Ես. 13:19-22 - 19 Եւ Բաբիլոնը՝ թագաւորութիւնների զարդը, Քաղդէացիների փառաւորութեան պարծանքը պիտի դառնայ այնպէս, ինչպէս Սոդոմն ու Գոմորը, որոնց Աստուած կործանեց: 20 Նա երբէք չի շէնանալու, և չի բնակվելու ազգէ ազգ. և արաբացիներն այլևս այնտեղով չպիտի անցնեն, հովիւներն այնտեղ այլևս հանգիստ չպիտի առնեն: 21 Այնտեղ կայան են գտնելու վայրի գազանները, և բուերն են լցնելու նորանց տները, և այնտեղ ջայլամներն են բնակուելու, և հուշկապարիկներն են այնտեղ պար գալու: 22 Եւ չագալներն են ոռնալու նորա պալատներում, և վայրի շները նորա զբօսանքի տներում, և մօտ է, որ գա նորա ժամանակը, և նորա օրերը չեն ուշանալու:
>
> Եր. 50:38-39 - 38 Զորութի՜ւն նորա ջրերի վրա, որ չորանան, որ նա կուռքերի երկիր է, և սոսկալի բաներով գժվում են: 39 Դորա համար այնտեղ վայրի կատուներ և բորենիներ պիտի բնակուեն, և ջայլամներ պիտի բնակուեն նորանում, և նա պիտի չ'բնակուի միւսանգամ հավիտյան, և շէն պիտի չ'լինի ազգէ ազգ:

3) Որովհետև նրա պոռնկության մոլեգին գինուց խմեցին բոլոր ազգերը և երկրի թագավորները նրա հետ պոռնկացան, և երկրի վաճառականները խիստ հարստացան նրա չափազանց զեխությունից»:

Հատուկ Կոչ Աստծո ժողովուրդին:

4) Ու երկնքից մի ուրիշ ձայն լսեցի, որ ասում էր. «Դո՛ւրս ելեք նրա մեջից, **<u>իմ ժողովուրդ</u>**, որ չառնչվեք նրա մեղքերին ու նրա պատուհասներից բաժին չստանաք: 5) Որովհետև նրա մեղքերը մինչև երկինք են հասել, և Աստված նրա անիրավությունները հիշեց:

Հիշեք, բոլոր 144.000-ն էլ հաղթել էին, ոչ մեկը չէր կորել: Նաև հիշեք, որ հովիվը չի բավարարվում 99-ով... Հմմտ. Բ Օր. 4:30-31, Եր. 51:5-6,45, Ես. 48:20:

> Եր. 51:6,45 - 6 Փախէք Բաբիլոնի միջից և ամեն մարդ ազատէ իր անձը, որ չը փչանաք նորա անօրէնութիւնով. որովհետև վրէժխնդրութեան ժամանակ է Տիրոջ համար, նորա արարքը պիտի հատուցանէ նորան: 45 Դուրս եկէք նորա միջից, ով իմ ժողովուրդ, և յուրաքանչյուրը թող ազատէ իր անձը, Տիրոջ բորբոքած բարկութիւնից:

Առանձնանալու պատվերը (Հռոմ. 16:17-18, Բ Կորն. 6:14-7:1):

> Հռ. 16:17-18 - 17 Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ո՛ւշ դրէք այնպիսիներին, որ հերձուածներ և գայթակղութիւններ են առաջ բերում այն վարդապետութիւնից դուրս, որը դուք սովորել էք. և հեռու քաշուեցէք նրանցից: 18 Որովհետև այդպիսիները մեր Տէր Քրիստոսին չեն ծառայում, այլ իրանց որովայնին. և քաղցր խօսքերով և գովութիւնով խաբում են անմեղների սրտերը:
>
> 2 Կոր. 6:14 - 14 Անհավատների հետ այլախառն <u>լծակից</u> մի եղէք. որովհետև ի՞նչ <u>մասնակցութիւն</u> ունի արդարութիւնը անօրէնութեան հետ. և ի՞նչ հաղորդութիւն ունի լուսը խավարի հետ:
>
> 2 Կոր. 7:1 - 1 Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծութիւնիցը, սրբութիւնը կատարենք Աստուծոյ ահովը:

6) Հատուցե՛ք նրան, ինչպես որ ինքը հատուցեց ձեզ, և կրկնապատի՛կը հատուցեք նրան իր կատարած գործերի համեմատ. այն գավաթը, որ ինքը լցրեց, կրկնապատի՛կ լցրեք նրա համար: 7) Որքան որ փառավորեց ինքն իրեն և զեխության մեջ ապրեց, նունքան էլ տանջանք ու սուք հատուցեք նրան, որովհետև նա իր սրտի մեջ ասում է. «Ես թագուհի եմ նստած, ես **որբևայրի չեմ** ու ոչ մի սուգ չպիտի տեսնեմ»:

«**Ես որբևայրի չեմ...**». տարօրինակ պարծանք է: Հմմտ. Իսրայելը YHWH-ի (Եհովայի) որբևայրին էր: Որբևայրի, ոչ-կույս, քահանաների համար անընդունելի հարսնացու (Ղևտ. 22:13): Երուսաղեմին հողում է արվում որպես որբևայրու (Ողբ. 1:1, հմմտ. Ես. 47):

8) Այդ պատճառով մեկ օրվա մեջ գալու են նրա պատուհասները՝ մահ ու սուգ, սով, և կրակով լրիվ պիտի այրվի, որովհետև հզոր է Տեր Աստվածը, որ նրան դատեց: 9) Եւ լաց եւ

կոծ կ՚անեն դորա վրա երկրի **թագավորները** որ դորա հետ պոռնկուեցան եւ զեղխություն արին, երբոր կ՚տեսնեն դորա այրուելու ծուխը, 10) Հեռու կանգնած դորա տանջանքի վախից, եւ կ՚ասեն. Վա՛յ, վա՛յ քեզ, մեծ քաղաքդ Բաբիլոն, զօրավոր քաղաք. որ մէկ ժամում եկավ քո դատաստանը։

Նկատեք, որ այս մարդկանց խմբերն անհատականացվում են. թագավորներ, առևտրականներ և նավով առևտուր անողներ... կրոնի կողմից սուտ հույսեր են ունեցել, չիրականացված երազանքներ։

11) Եւ երկրի **վաճառականները** ողբ եւ սուգ կ՚անեն նորա վրա, որ այլ եւս ոչ ոք չի առնում նորանց ապրանքը։ 12) Ոսկու եւ արծաթի եւ պատուական ակունքների եւ մարգարիտի եւ բեհեզի եւ ծիրանիի եւ մետաքսի եւ որդան կարմիրի ապրանքը, եւ ամեն խնկէ փայտը եւ ամեն փղոսկրեա անօթը, եւ ամեն ազնիվ փայտից եւ պղնձից եւ երկաթից եւ մարմարիոնից շինած անօթը, 13) Եւ կինամոն, ամէն տեսակ խունկ եւ անուշահոտ յուղ, կնդրուկ, գինի, ձէթ, ազնիվ ալյուր եւ ցորեն, եւ ամէն ունեցուածք՝ արջառ ու ոչխար, երիվարներ ու կառքեր, որ վայել են մարդկանց մարմիններին (slaves) եւ հոգիներին։ 14) Եւ քո հոգու ցանկացած պտուղները գնացին քեզանից, եւ ամեն շքեղ եւ լուսափայլ վայելչությունները գնացին քեզանից, եւ այլ եւս բնավ չես գտնի նորանց։

«Ստրուկներ». Հռոմի բնակչության 1/3-ը ստրուկներ էին, ամեն օր 10.000 հոգի Կայսրությունում առևտուր էր անում, մոտավորապես 50 միլիոն: Մենք այսօր ստրուկներ ունե՞նք: Իսկ ի՞նչ կասեք տնտեսական ստրկության մասին: 60% հարկերի մեջ, կորպորացիաների տնտեսական կապանքները, ճողությունը և այլն, «համակարգից» դուրս գալու անկարողությունը:

15) Եւ այս բաների վաճառականները, որ նորանից հարստացան հեռվից կ՚կանգնեն նորա տանջանքի վախից լաց եւ սուգ անելով, կ՚ասեն. 16) Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք որ բեհեզ եւ ծիրանի եւ որդան կարմիր էիր հագած, եւ ոսկով եւ ազնիվ քարերով եւ մարգարիտով զարդարուած։ 17) Որովհետեւ մէկ ժամի մէջ այդչափ մեծությունը ավերակ եղավ. եւ ամեն նավավար եւ այն ամենն որ նավով գնում են տեղ տեղ, եւ նավաստիները եւ նորանք որ ծովումս են գործում, հեռվից կանգնեցին, 18) Եւ աղաղակում էին նորա այրվելու ծուխը տեսնելով եւ ասում. Ո՞րն է այս մեծ քաղաքի նման։ 19) Եւ հող ցանեցին իրենց գլուխների վրա, եւ մեծ ձայնով աղաղակեցին լաց եւ սուգ անելով եւ ասեցին. Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք որ նորանում հարստացան բոլոր ծովի վրա նավեր ունեցողները նորա պատուականութիւնից. որովհետեւ մէկ ժամի մէջ ավերակ դառավ։ 20) **Ուրախ եղէք** նորա վրա, երկինք եւ սուրբ առաքյալներ եւ մարգարէներ, որ Աստուած ձեր դատաստանը դատեց դորա վրա։

Այս գրքում առաջին անգամ այստեղ է ուրախանալու պատվեր տրվում: Եր. 51:56, 59-64: (Ինչի՞ համար ես այսօր դու ուրախանում: Ինչի՞ն է ուղղված քո սիրտն այսօր):

21) Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մի քար առաւ մեծ ջաղացաքարի պէս եւ գցեց ծովի մէջ ասելով. Այսպէս ուժով պիտի վայր գցուի Բաբիլոն մեծ քաղաքը, եւ այլ եւս չ՚գտնուի։
22) Եւ քնարերգների, եւ երաժիշտների եւ սրնգահարների, եւ փողահարների ձայնը այլեւս պիտի չ՚լսուի քո միջում եւ այլեւս ոչ մի արհեստագէտ բնաւ չի գտնուի քեզանում. եւ ջաղացի ձայն այլեւս չի լսուիլ քեզանում.

Գործարանները փակվում են: Լույսերը հանգում են: Ամեն բան վերաջանում է: (ՀՀԿ-Ն հանձնվում է)

23) Եւ ճրագի լոյս այլեւս լոյս չի տա քեզանում. եւ փեսայի եւ հարսի ձայնը այլեւս բնաւ չի լսուի քեզանում. որովհետեւ քո վաճառականները երկրի մեծամեծներն էին. քո կախարդությունով մոլորուեցան բոլոր ազգերը։ 24) Եւ նորանում գտնուեցաւ մարգարէների եւ սուրբերի եւ երկրի վերա բոլոր սպանուածների արյունը։

Համեմատեք Հայտ. 17:6, Մաթ. 23:35:

16) Եվ տասը եղջյուրները, որ տեսար գազանի վրա, ատելու են պոռնիկին ու նրան դարձնելու են ամայի ու մերկ և ուտելու են նրա մարմինն ու կրակով այրելու են նրան:

Մատ. 23:35 - 35 Որպէսզի ձեզ վերայ գայ ամեն արդար արիւն, որ երկրի վերայ թափուել է՝ արդար Աբէլի արիւնիցը մինչեւ Բարաքիայի որդի Զաքարիայի արիւնը, որին սպանեցիք տաճարի եւ սեղանի մէջտեղը։

Բաբելոնի կանխորոշված վախճանը

Բաբելոնի անկումը 539թ.-ին Ք.Ա.

-առանց ճակատամարտի (Մեդո-Պարսկաստան)

- դարձավ Ալեքսանդր մեծի մայրաքաղաքը

- դարերի ընթացքում ջլատված

- ներկայումս վերակառուցվում է

Բաբելոնի կործանումը (Ես. 13,14գլ., Եր. 50,51գլ.)

- «երբևէ չի վերաբնակեցվելու»

- «շինարարական նյութերը երբեք նորից չեն օգտագործվելու»

- «Սոդոմի ու Գոմորի նման»

Հաջորդ դաս

Կարդացեք 19-րդ գլուխը: Վերանայեք Հրեական Հարսանիքի ձեր նշումները:

«Հինգերորդ ձիավորը». Հայտնություն 19:11-16